ՔԱՐՈԶԽՈՍՄԱԿԱՆ

Տ. ՎԱՐԴԱՆ ԱԲԵՂԱ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ Ս. ԽԱՉԻ ԵՐԵՎՄԱՆ ԿԻՐԱԿԻԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(9 մայիսի 2004 թ.)

«Այսօր ընդ ամպս լուսաւորս երևեալ նշան տէրունական սուրբ խաչին, զի հաղթեսցուք նովաւ անօրէն թշնամւոյն կնիք հաստատութեան ընկալեալք ի յանձինս մեր»:

(Շարակնոց)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելիներ, Հարության հիսնօրյա այս շրջանում Քրիստոսի հետ առիթ ունեցանք քայլելու մեր հայրերի սահմանած կիրակիների խորհրդով, և ապա Գողգոթայի ջարդարանաց և սգո շղարշը վերցվեց մեր Փրկչի Հարության լույսի ճառագայթումով հայ ժողովրդի հոգիներից ներս՝ ավետելով, թե «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»: Եվ այդ հոգիներից սրբությունն ու առաքինությունն աղոթք դարձած՝ արձագանքեց Տիրոջ ավետիսին՝ ասելով. «Օրհնեալ եւ փառաւորեալ է յարութիւն Քրիստոսի Աստուծոյ մերոյ»:

Այո՛, իսկապես եղան Թովմաս առաքյալի նման թերահավատներ, ովքեր անգամ անցնելով ապաշխարության և ինքնամաքրման մի մեծ ճանապարհ՝ դարձյալ թերահավատացան, և կարիքը եղավ վերստին վերականգնելու Քրիստոսի Հարության իրողությունը: Եվ այս անգամ Քրիստոս սիրո և խաղաղության ավետիսով հայտնվեց մեզ՝ նորոգելով և նորացնելով մեր հոգիները:

Այնուհետև, սիրելիներ, փիեզերքի վրա Փրկչի աշխարհակեցույց Մատուռը հաստատվեց: Գարնանային թարմության կենսալի կանաչապատումով զարդարեց մեր հոգիները ճշմարտության և կյանքի իմաստության սուրբ լույսով: Այդ ճշմարտությունը, հաստատված երկրի վրա, սակայն մեծ զոհողություն պահանջեց, և մեր առաքելական շրջանի հայրերն իրենց նահատակության և արյան կարմրագույնով առավել ամրացրին աշխարհում ստեղծված այդ Մատռան հիմքերը և մեր հավատքը առավել ամուր կապով և ուժով ամրացրին Քրիստոսի Հարության հավատքի հետ:

Այսօր, սիրելիներ, Քրիստոսից հետո չորրորդ դարում, 351 թ., Երուսաղեմում տեղի ունեցած լուսավոր ամպի միջից Տերունի Ս. Նշանի Երևման տոնն է, որով պետք է հաղթենք անօրեն թշնամուն՝ մեր սրտի մեջ հաստատ հարության կնիքն ընդունելով: Այո՛, երևաց Տերունի Ս. Նշանը խաչելավայր Գողգոթայից մինչև Համարձման Զիթենյաց լեռ՝ տարածելով իր ճառագայթափայլ լույսը և սփռելով քրիստոնյաների հոգիներից ներս իմաստության լույսը: Խաչի երևման անհրաժեշտությունը եղավ, որովհետև ժամանակի Կոստանդ կայս-

ը, ում հայրը ևս Խաչի միջոցով, Խաչի նշանով հաղթել և պարտության էր մատնել անօրեն թշնամուն և առավել հաստատել իր հավատքը, այս անգամ իր որդին՝ Կոստանդ կայսրը, կարիքն ունեցավ երկնքից Տիրոջ երևելի Նշանի, որպեսզի իր հավատքն առավել ամրանա և հաստատվի:

Խաչը, սիրելիներ, եղավ փրկության գործիք մեզ համար, որովհետև Ամենակարող Աստծո սիրով Հոր Միածին Որդին մարմնացավ, բնակվեց մեր մեջ և հանուն մեր փրկության խաչը ելավ՝ գամելով չարը և մեղքը այդ Խաչի վրա, և մեզ ազատեց՝ մահվան գործիքը կենդանության միջոցի վերածելով:

Այսօր ևս այս Ս. Սեղանի վրա իջնում և այս Ս. Սկիհի պատարագումով՝ Հացի և Գինու փոխակերպումով սրբագործում է մեզ՝ դեպ փրկության ճշմարիտ ուղին առաջնորդելով:

Նախահայր Ադամը, սիրելիներ, քաղեց չարի և բարու գիտության ծառից և մահվան դատապարտությունը կերավ:

Իսկ մենք այսօր Պատարագի մասնակցությամբ պետք է ճաշակենք Խաչի վրա Խաչյալի կենաց ծառից այն պտուղը, որ պետք է կենդանացնի մեր հոգիները՝ ասպվնծգիտության լույսը մեր մեջ ծագեցնելով:

Մեր ժողովուրդը պատմության ընթացքին հավատալով Խաչի միջոցով Խաչյալի հարությանը՝ ունեցավ իր հարությունը և կանգնեց թշնամու անօրեն նիզակի առջև և իր նահատակության արյունով փաստեց և ապացուցեց, որ Քրիստոսի հավատքը միայն խոսքով չի սահմանափակվում, այլև Խաչի նշանով վերածվում է գործի և այդ գործով կենդանանում և ներառնվում է մեր հոգիներից ներս: Այո, մեր ժողովուրդը չհավատաց լոկ նյութական ոսկյա, պղնձյա կամ փայտյա խաչին, այլ այդ խաչի միջոցով այն փրկությանը, որ դրեց իր սրտի մեջ և այն հավատքի հաստատությամբ և ամրությամբ, որ պետք է մի օր իր նահատակության արյան գնով հարություն առնի, զորանա և կանգնի Տիրոջ առջև՝ սպանալու իր լուսո պսակը:

Այսօր Երևման Ս. Խաչի տոնը, սիրելիներ, Աստծո նախախնամությամբ համընկել է Շուշիի ազատագրման հետ: Այո՛, 1992 թ. մայիսի ինն էր, որ հայ զինվորները խաչը իրենց ուսին հավատացին հարության, հավատացին այն ուժին, որ պետք է պարգևվեր իրենց հաղթանակով, հավատացին պատմության այն իրողությանը, որ Տերն Ինքը պետք է հայտնվեր և ասեր. «Այս Ս. Նշանով պետք է հաղթեք»: Հավատացին և հաղթեցին:

Այսօր մեր պարտքն է հիշել և պանծացնել այս իրողությունները՝ զուգորդելով երկու մեծ խորհուրդներ. Խաչի Երևման տոնը և այդ Խաչի երևմամբ նաև մեր ժողովրդի հավատքի իբրև արտահայտություն՝ հաղթանակը:

Ես մաղթում եմ, որ մեր ժողովրդի գիտակցությունն այնքան ուժգնանա, որպեսզի ի մի խմբված այս Ս. Տաճարի ներսում միասնաբար աղոթքի բռնվենք Խաչի քառաթև նշանով պատսպարված և իր պահպանությունը խնդրելով, արդարներին խորհրդակից դարձնելով, սգավորներին մխիթարություն դարձնելով և մանավանդ թերահավատներին ամուր և հաստատուն հավատք մաղթելով:

Թող Տիրոջ ամենակարող Ս. Խաչը ներգործի մեր ժողովրդի կենսակերպի մեջ և հաղթության գիտակցությամբ, հարության ներգործությամբ մշտապես հաղթանակի և մշտապես փառավոր, լուսավոր սուրբ պսակի առաջնորդի այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն: